



ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (ԿԿԿ), ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ



Federal Ministry
for Economic Cooperation
and Development



Կենսաբազմազանության Կայուն Կառավարում (ԿԿԿ). Տեխնիկական համագործակցություն ծրագիրը Հարավային Կովկասում

Գործընկեր երկրներ	Հայաստան, Ադրբեջան, Վրաստան
Դոնոր	Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման ֆեդերալ նախարարություն (BMZ)
Ընդհանուր տևողություն	2008 հունիս – 2016 մայիս (1-ին փուլը՝ 2008 հունիս – 2011 մայիս)
Ընդհանուր բյուջե	մինչև 20.000.000 Եվրո (1-ին փուլը՝ մինչև 6.500.000 Եվրո)

Կոնտեքստը

Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի բնական ռեսուրսների վրա գործադրվող ճնշումը մեծ է, ինչը և արագացնում է գյուղական բնակչության եկամուտների աղբյուրների ոչնչացման գործընթացը: Դա համատարած աղքատության, էլեկտրաէներգիայի և հումքի բարձր պահանջարկի ու տնտեսական կտրուկ աճի արդյունք է: Հարավային Կովկասի երկրներում տնտեսապես եկամտաբեր բիզնեսը հիմնված է կենսաբազմազանության վրա, հատկապես պահպանվող տարածքների սահմաններում և դրանց շուրջը, և հետևաբար դիտվում է որպես բնությանը սպառնացող երևույթ: Զանազան կենսաբազմազանության տեսակների կայուն կառավարում հասկացությունը բացակայում է ներկայիս պետական, քաղաքացիական հասարակության կամ մասնավոր սեկտորի մոտեցումներում: Առ այսօր, կայուն օգտագործումից բխող զարգացման հեռանկարներն անբավարար ուշադրության են արժանացել:

Նպատակը

Գերմանական Տեխնիկական Համագործակցության (ԳՏՀ) հիմնական նպատակն է տնտեսապես ազդեցիկ և կայուն օգտագործվող բնական ռեսուրսների ինտեգրումը կառավարության ոլորտի, բիզնեսի և հասարակության մեջ, որպես այդ ռեսուրսների պահպանման ազդեցիկ միջոց: Ակնկալվում է, որ բնական ռեսուրսների կայուն օգտագործման և գյուղական շրջաններում տնտեսական զարգացման միջև կապի հաստատման հաջողված օրինակները կնպաստեն պետական և մասնավոր սեկտորի կողմից բնական ռեսուրսների կայուն օգտագործման մեջ հետագա ներդրումների ծավալների ավելացմանը: Հատուկ պահպանվող տարածքները այլևս չեն համարվում տեսակների բազմազանության պահպանման միակ միջոցը:

Մոտեցումը

Համագործակցության զարգացումը առաջնային առավելություն է տալիս Հարավային Կովկասի երկրներում ստեղծել կենսաբազմազանության կայուն կառավարման համար բարենպաստ պայմաններ: Աջակցություն է ցուցաբերվում համապատասխան օրենքների բարեփոխման, ինչպես նաև ռազմավարության և իրականացման ուղեցույցների բարելավման ուղղությամբ: Մենք նաև աջակցում ենք կազմակերպչական և համագործակցող կառավարական մարմինների հնարավորությունների և պոտենցիալի զարգացմանը, ներառյալ համագործակցող նախարարությունների ներքո և դրանցից դուրս աշխատակազմի վերապատրաստում, և նպաստում ենք բնապահպանական հաղորդակցման զարգացմանը:

Տեղական մակարդակի առաջնային գործողություններից է բնական ռեսուրսների կառավարումը ընտրված փորձական տարածքներում: Կենսաբազմազանության կայուն և տնտեսվող օգտագործումը այդ տարածքներում իրականացվում է մթերումից մինչև շուկա արժեքների շղթայի ձևավորման միջոցով: Տեղական առևտրի հնարավորությունները և մարդկանց ապրուստի համար գումարներ վաստակելու այլընտրանքային ճանապարհները ուղղված են բնակչությանը՝ և մասնավորապես կանանց, տրամադրել եկամուտ ստանալու նոր միջոցներ:

Հարավային Կովկասի երեք երկրների միջև եղած զգալի տարբերությունները պահանջում են նաև տարբեր մոտեցումներ: Գործողություններն իրականացվում են ելնելով երկրի յուրահատկություններից և պահանջներից: Ծրագիրը նաև կոչված է նպաստել անդրսահմանային երկրների միջև երկխոսության և տեխնիկական փոխանակման առաջընթացին:

Հայաստանում ԿԿԿ ծրագրի հիմնական բաղադրիչները

Կենսաբազմազանության կոնվենցիայի իրականացումը (UNCDB)

Անկախության հռչակումից հետո Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) 1993 թ-ին Միացյալ Ազգերի Կազմակերպությունում ազդարարեց կենսաբազմազանության պահպանման կարևորության մասին և ստորագրեց Կենսաբազմազանության կոնվենցիան՝ ստանձնելով դրանում ամրագրված բոլոր պարտավորությունները կենսաբազմազանությունը պահպանելու նպատակով: Իր «Կենսաբազմազանության Կայուն Կառավարում» (ԿԿԿ) ծրագրի շրջանակներում ԳՏՀ-ն աջակցում է ՀՀ կառավարությանը կենսաբազմազանության կայուն օգտագործման համար քաղաքական, իրավական և ինստիտուցիոնալ բարենպաստ պայմաններ ստեղծելու գործում:



Կենսաբազմազանության մոնիտորինգի ազգային համակարգի ստեղծումը

Հայաստանի կենսաբազմազանության ներկայիս իրավիճակը և փոփոխությունների մասին ստույգ տեղեկատվության առկայությունը ամուր հիմք են հանդիսանում իրատեսական քաղաքականության ձևավորման և որոշումների կայացման համար: ԿԿԿ ծրագիրը աջակցում է ՀՀ կառավարությանը կենսաբազմազանության մոնիտորինգի ազգային համակարգի ներդրման հարցում՝ համապատասխանեցնելով այն միջազգային ստանդարտներին և լավագույն փորձին:



Կենսաբազմազանության արժեքի վերաբերյալ հանրային իրազեկման բարձրացումը

Ի՛նչ է նշանակում «կենսաբազմազանության արժեք»?: Մարդիկ պետք է հասկանան կենսաբազմազանության կարևորությունը իրենց բարեկեցությունն ապահովելու իմաստով և պետք է իմանան թե, ինչպես կայուն օգտագործելով այն, կարելի է երկարաժամկետ շահույթներ ստանալ: Միայն այդ դեպքում նրանք կկարողանան կրել անհատական և քաղաքական պատասխանատվություն իրենց ապագայի կերտման համար: ԿԿԿ ծրագիրը կազմակերպում է հանրային իրազեկման արշավներ, որոնք հասցեագրված են երեխաներին, տեղական համայնքներին, քաղաքական որոշումներ կայացնողներին, շահառուներին և այլ հասարակական խմբերին:



Հատուկ պահպանվող տարածքների կառավարումը

Հատուկ պահպանվող տարածքների արդյունավետ կառավարումը կախված է մեծ ֆինանսական միջոցներից: ԿԿԿ ծրագիրը փորձարկում է, թե ինչպես կենսաբազմազանության կայուն օգտագործումը կարող է նպաստել Հայաստանում հատուկ պահպանվող տարածքների կառավարման համար ֆինանսական միջոցների ավելացմանը:



Տեղական եկամուտների ստեղծումը

Կենսաբազմազանության պահպանման նախապայմաններից է գյուղական համայնքներում կայուն կենսամակարդակի առկայությունը: ԿԿԿ ծրագիրը լրացուցիչ ֆինանսական միջոցներ է ստեղծում կենսաբազմազանությունը կայուն կերպով օգտագործող համայնքների համար և, հետևաբար, խրախուսում մարդկանց պահպանելու իրենց եկամուտների աղբյուրը:





Լուսանկարները © ԲՀՀ (WWF) Հայաստան / Ա. Մալխոյան / FPWC/ ԳՏՀ (GTZ)



Բնագաղափարային նախարարություն

Հասցե՝ Երևան 375010, Հանրապետության
հրապարակ, Կառավարական տուն 3
Հեռ.՝ +3741-10-521099
Էլ. փոստ՝ interdpt@mnp.am
www.mnp.am

Տարածքային կառավարման

նախարարություն
Հասցե՝ Երևան, Հանրապետության
հրապարակ, Կառավարական տուն 2
Հեռ.՝ +374-10- 525274, 511302
Էլ. փոստ՝ mta@mta.gov.am
www.mta.gov.am

Գյուղատնտեսության նախարարություն

Հասցե՝ Երևան 375010 , Հանրապետության
հրապարակ, Կառավարական տուն 3
Հեռ.՝ +374-10- 524641
Էլ. փոստ՝ naxartex@yahoo.com
www.minagro.am



**Deutsche Gesellschaft für Technische
Zusammenarbeit (GTZ) GmbH**

GTZ Programme Office-Yerevan
Nalbandyan Str. 48/1,0010-Yerevan
Tel: +374-10-546031
E-mail: thomas.eberherr@gtz.de
www.gtz.de